



Doi: 10.56737/2953-7843-2024.10-126

ՓՈՔՐԻԿ ԵՐԿՐԻ ԶԵՆԱԳՐԱԿԱՆ ՄԵՍ ԳԱՆՁԵՐԸ¹

Չեռագիր մատեանների ստեղծումն ու պահպանութիւնը միջնադարում կարեւոր է եղել գրեթէ բոլոր՝ քաղաքակիրթ-քաղաքակրթունքի ու երկրների համար: Այսօր արդէն այդ շրջանում ստեղծուած ձեռագրական ժառանգութիւնն անգնահատելի գանձ է, թէ՛ հոգեւոր, թէ՛ ուղղակի իմաստով: Եւ իւրաքանչիւր ժողովրդի ամբարած այս հարստութեամբ կարելի է պատկերացում կազմել անցեալում ներդրած իր ջանքերի ու ներուժի մասին, կամ պարզապէս գիտակցել նրա վերաբերմունքը գիտութեան ու կրթութեան, լուսաւորութեան հանդէպ: Թուրքիկ որոնմամբ անգամ կարելի է տեսնել, որ այսօր Վատիկանի Առաքելական Գրադարանում պահուած է աւելի քան 80 000 ձեռագիր, որոնց զգալի մասը լատիներէնով, յունարէնով ու արեւելեան լեզուներով է: Սրան պէտք է յաւելել նաեւ Իտալիայի հանրապետութեան ժառանգութիւնը՝ մօտ 25 000–30 000 մատեան: Ֆրանսիայում պահուած է աւելի քան 60 000 ձեռագիր²: Գերմանիայի հաւաքածուն գրեթէ 30 000–40 000 է, Յունաստանինը՝ մօտ 20 000–25 000, Բրիտանիայինը՝ 20 000–30 000³: Իսպա-

¹* Ստացուել է՝ 7.07.2024, գրախօսուել է՝ 8.08.2024:

Էլ. հասցէ՝ targ.anich1@mail.ru, arshalujsgalstyan@ysu.am:

² Շատերին գերազանցող այս թիւը բացատրելի է աշխարհագրական բարենպաստ գիրքով, քաղաքական կայունութեամբ, Կառօլինգեան Վերածնունդով (Թ. դար), Փարիզի համալսարանի հիմնադրմամբ (մօտ 1200 թ.), եւ յատկապէս լաւ զարգացած վանական ցանցով, որ հովանաւորում էր պետականօրէն. այս կապակցութեամբ տես R. MCKITTERICK, *The Carolingians and the Written Word* (Cambridge University Press, 1989, էջ 87. «The Carolingian Renaissance was a conscious effort to revive learning and culture, with Charlemagne and his successors promoting education through the establishment of schools in monasteries and cathedrals», հմմտ. P. RICHÉ, *Education and Culture in the Barbarian West: From the Sixth through the Eighth Century* (University of South Carolina Press, 1978, էջ 187. «Charlemagne's reforms led to the creation of a network of monastic and cathedral schools, aiming to educate the clergy and revive classical learning»:

³ Անգլո-սաքսոնական շրջանից (Ե.–ԺԱ. դդ.) սկսեալ Բրիտանիայում ձեռագրերը գրչազրուում էին հին անգլերէնով, իսկ Նորմանդական նուաճումից յետոյ (1066)՝ միջին անգլե-

նհայտում մօտ 6000–8000 է, այդ թվում՝ Մոզ-արաբական եւ արաբական ազդեցութեան տակ ստեղծուած եզակի նմուշներ: Հռոմէական սրբազան կայսրութեան մաս կազմած Պրահայի կամ Բօհէմիայի թագաւորութիւնը համարեա 4000 ձեռագիր է ժառանգել իր իրաւայաջորդին⁴: Որոշներին զանց առնելով՝ յիշենք մեր կարծիքով ուշագրաւ դէպքերը: Օրինակ՝ Լեհերը քրիստոնէութիւն ընդունել են 966-ին: Նրանց տարածքում ձեռագրական մշակոյթն սկսել է ձեւաւորուել ԺԳ. դարում, եւ պահպանուած մատեանների քանակը 2000–3000 օրինակ է՝ լատիներէն, սլաւօներէն, որոշ չափով լեհերէն (յատկապէս ԺԳ.–ԺԵ. դդ. յետոյ): Լատուիան եւ էստօնիան քրիստոնէութիւն ընդունել են ԺԳ. դարում: Ձեռագրական մշակոյթը՝ հիմնականում գերմանացի հոգեւորականների ու վանական դպրոցների միջոցով է տարածուել: Ձեռագրերը լատիներէնով եւ միջնադարեան գերմաներէնով են, ընդհանուր տարածաշրջանի համար պահպանուած նմուշները 1000-ից պակաս են: Լիտուան քրիստոնէութիւն ընդունել է 1387-ին, գրաւոր մշակոյթը հիմնականում լատիներէն է, քիչ ուշ շրջանառուել է նաեւ եկեղեցական սլաւօներէնը, իսկ ձեռագրերի քանակը դիտարկուում է մի քանի հարիւր օրինակից ոչ աւելի⁵: Ռուսիոյ տարածքում՝ Կիւեւեան Ռուսիայի դարաշրջանից սկսեալ մինչեւ ԺԵ. դարը, ձեռագրական մշակոյթը զարգացել է գլխաւորապէս եկեղեցու հովանու ներքոյ՝ հիմնուելով սլաւօնական գրական ավանդոյթի վրայ: Պահպանուած հին ռուսերէն ձեռագրերի թիւը մօտաւոր հաշուար-

րէնով եւ լատիներէնով: Մօտաւոր հաշուարկով՝ այդ ժամանակաշրջանում ստեղծուել է շուրջ 50 000 կամ աւելի ձեռագիր: Այս ձեռագրերն ընդգրկում են ոչ միայն կրօնական բնագրեր, այլեւ իրաւական ժողովածուներ, պատմական տարեգրութիւններ, բժշկութեան ու աստղագիտութեան ժողովածուներ, ինչպէս նաեւ գեղարուեստական եւ փիլիսոփայական երկեր: Գերմանական ավանդոյթով ձեւաւորուած որոշ ձեռագրեր զարգարուած են մանրանկարներով ու ոսկեզօծ տառերով եւ տուեալ ժամանակաշրջանի գեղարուեստական ճաշակն են ի ցոյց դնում:

⁴ Տէս M. P. BROWN, A Guide to Western Historical Scripts from Antiquity to 1600, London, 1990, N. R. KER, Catalogue of Manuscripts Containing Anglo-Saxon, Oxford, 1957, «The Cambridge History of the Book in Britain», Vol. I, էջ 400–1100, Cambridge, 2011, J. BACKHOUSE, The Illuminated Manuscript, Oxford, 1979, M. B. PARKES, Their Hands Before Our Eyes: A Closer Look at Scribes. Aldershot, 2008, C. DE HAMEL, A History of Illuminated Manuscripts, London, 1994, И. БЕЛЯЕВ, История русской письменности, М., 1966, А. ЗИМИН, Культура Древней Руси, Москва, 1969, M. T. CLANCHY, From Memory to Written Record England 1066–1307 2nd Edition, JOHN WILEY & SONS, 2009, Latin Palaeography: Antiquity and the Middle Ages. Cambridge: Cambridge University Press, 1990 եւ այլն:

⁵ Տէս Н. МОРОЗОВА, С. ТЕМЧИН, Церковнославянские рукописи Литовской национальной библиотеки им. М. Мажвидаса, «Slavistica Vilnensis», 2002, Kalbotyra 51(2), 117–134:

կով 1500—2,000 է⁶: Ռուսական գրատպութիւնից յետոյ (1564)⁷ ձեռագրերի թիւն սկսել է նուազել:

Բնականաբար ներկայ տուեալները զուգադրելիս առաջնայինը պէտք է հաշուի առնել երկրների երբեմնի հզօրութիւնը, զբաղեցրած տարածքները, պետական վերաբերմունքը վանքերի եւ գրչութեան կենտրոնների հանդէպ, յարաբերական անդորրի տարիները, բնակչութեան հաւանական թիւը: Վերջինները յոյժ կարեւոր են մեր նախնեաց պարագային. ի հեճուկս դժուարագոյն պայմանների նրանք այնքան մատեաններ են ստեղծել, որ աւար ու աւերների դարերից յետոյ այնուամենայնիւ 30 000 հայերէն գրչագիր հասել է մինչեւ մեր օրերը⁸: Այս եւ այլ բազմաթիւ ցուցիչների ամբողջացրած պատկերով միայն հնարաւոր կլինի գիտակցել երեւոյթի իրական կամ գոնէ մօտաւոր ծաւալը, ուր Արեւմուտքն ու Արեւել-

⁶ Տե՛ս https://nlr.ru/manuscripts/RA2902/old-russian-manuscripts?utm_source=chatgpt.com:

⁷ Ռուսական ձեռագրերի, սլաւօնական գրի եւ ռուսական տպագրութեան կապակցութեամբ տեղին ենք համարում հետեւեալ քաղուածը. «...ռուս ժողովրդի պատմութեան վճռական պահերին՝ մի քանի դարձակէտերում, հայերը եղել են նրանց կողքին: Այսպիսի կարեւոր պահերից յիշատակելի են սլաւօնական գրերի գիւտը, տպագրութեան սկզբնաւորումը եւ մշակութային յեղափոխութեան հետ կապուած այլ հանգամանքներ: Սլաւօնական այբուբենի ստեղծողներին՝ Կիրեղին (Կիրիլ) եւ Մեթոդիոսին Մագնաւարայի բիւզանդական համալսարանի հիմնադիր Կեսար Վարդն առաքեց սլաւօնների մէջ լուսաւորութիւն տարածելու: Ինչպէս յիշեալ Վարդը նոյնպէս եւ Կիրեղի եւ Մեթոդիոսի ուսուցիչներից շատերը, այդ թւում՝ Փոտ պատրիարքը հայ էին (տե՛ս Ն. Ա. ԳՈՆՅ, Պատմական ուսումնասիրութիւններ, Փարիզ, 1948, Հ. ԲԱՐԹԻԿԵԱՆ, Բիւզանդիա եւ Հայաստան, «Գիտութիւն եւ տեխնիկա», 1985, հ. 4, էջ 40): Մշակութային մեծագոյն նշանակութիւն ունեցող երեւոյթ էր ռուսական տպագրութեան սկզբնաւորումը 1564 թ. Իւան Ֆեօդորովի եւ նրա օգնականների ջանքերով: Ռուս տպագրիչը ծանօթ է եղել հայ առաջին տպագիր գրքերին, օգտուել է Յակոբ Մեղապարտի փորձից. այս պարագան պարզել է նշանաւոր մատենաբան, ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Ալեքսէյ Սիդորովը («Советская культура», 1963, հ. 41, «400 лет русского книгопечатания», 1964, էջ 32—33, 42): Նոյնպիսի կապ է նկատուած 1695 թ. Ամստերդամում Դուկաս Նուրիջանեան-Վանանդեցու հրատարակած «Համատարած աշխարհացոյցի» եւ Պետրոս Առաջինի թելադրութեամբ 1699-ին Ամստերդամում լոյս տեսած, այնուհետեւ 1707 եւ 1713 թուականներին Մոսկուայում վերահրատարակուած աշխարհամասերի քարտէզի միջեւ (Մ. ХАЧАТРЯН, Карта мира Гукаса Ванандеци, ԲԵՀ, 1970, հ. 1, էջ 187—192)», տե՛ս Ա. ՄԱԳՈՅԵԱՆ, Հայ-ռուսական գրական փոխառնչութիւններ, Երեւան, 1985, էջ 5: Այստեղ յաւելւեալ, որ բերեալ հատուածի «հրատարակչական խմբագրման» ընթացքում «աւելորդ են նկատուել» Կիրիլի եւ Մեթոդիոսի գլխաւոր ուղղորդող Բիւզանդիայի Թէոդորա կայսրուհու անունը ինչպէս եւ կայսրուհու եւ իր եղբօր՝ Վարդ Կեսարի Մամիկոնեան իշխանական ազգանունը:

⁸ Ձեռագրագէտ Արտաշէս Մաթեոսեանը, ի միտ առնելով իր կազմած «Հայերէն ձեռագրերի համահաւաք քարտարանի» տուեալները, պարզել է, որ Հայաստանում եւ աշխարհի տարբեր երկրներում կայ շուրջ 30 հազար հայերէն ձեռագիր՝ գրուած մօտ 2000 գրչութեան կենտրոններում. տե՛ս Ա. ՄԱԹԵՆՈՍԵԱՆ, Հայերէն ձեռագրերի յիշատակարանները միջնադարեան հայ մշակոյթի ուսումնասիրութեան սկզբնաղբիւր, Երեւան, 1998, էջ 79:

քը կտրուկ կտարբերուեն՝ եւ ոչ յօգուտ Եւրոպայի⁹: Փոխարէնը Եւրոպան հազարապատիկ գերազանցում է միջնադարագէտ-ձեռագրագէտների թուով, այդ գիտաճիւղի հանդէպ պետական հոգածութեամբ, կառավարական ու մասնաւոր ներդրումներով, որ փաստօրէն նախանշում են ասպարէզի վաղուայ օրը, երբ միայն նուիրումն ու բուռն ցանկութիւնը բաւարար չեն լինի առաջընթացի համար:

Հայ գրաւոր մշակույթի պատմութեան մէջ գրչութեան կենտրոնների ուսումնասիրութիւնը գիտական առաջնային խնդիրներից է, որ ներառում է մեր մշակութային ժառանգութեան մի կարեւորագոյն ոլորտի վերլուծութիւնն ու գրաւոր մտքի եւ քաղաքակրթական ինքնութեան ձեւաւորման ընթացքի քննութիւնը: Այս տեսանկիւնից պատմական գիտութիւնների թեկնածու, Սեւանի Վազգէնեան դպրանոցի եւ Գէորգեան հոգեւոր ճեմարանի երկարամեայ դասախօս Արփենիկ Ղազարոսեանի՝ «Գեղամայ երկրի գրչութեան կենտրոնները եւ ձեռագրական ժառանգութիւնը» գիրքը¹⁰, որ հրատարակուել է Մեսրոպ Մաշտոցի անուն մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ եզակի եւ հիմնարար ուսումնասիրութիւն է՝ նուիրուած Սեւանի աւագանի՝ պատմական Գեղամայ երկրի գրչութեան պատմութեանը: Մենագրութիւնից իմանում ենք, որ այս տարածքից ժամանակի փորձութեանն ու բնական ու մարդկային աղէտներին դիմացել ու փրկուել է ընդամենը 67 գրչագիր մատեան: Հանգամանալի կերպով ձեռագրերի պատմութիւնը մեզ ներկայացնելով՝ Ղազարոսեանը համապարփակ տեղեկութիւններ է տրամադրում, ուր առկայ են ոչ միայն մատեանի կամ գրչագրողի վերաբերեալ բոլոր մանրամասնութիւնները, այլեւ ստեղծման վայրի պատմութիւնը, որ հեղինակը շարադրում է բազ-

⁹ Եթովպիայի գրչութիւնը Դ.—Ե. դարերից է: Առանց ընդհատման եկեղեցական հին լեզուն՝ Գեէզը կիրառւում մինչ օրս: Պահպանուած ձեռագրերն ըստ ամենայնի 10 000-ից ավելի են (F. HARTER, Ink, angels and hard graft: the artists keeping Ethiopia's ancient illuminated manuscript craft alive, «The Guardian», Fri 11 Apr 2025. https://www.theguardian.com/global-development/2025/apr/11/ethiopian-artists-addis-ababa-workshop-preserving-ancient-christian-writing-methods?utm_source=chatgpt.com): Ղպտինների ներկայիս ձեռագրական աւանդույթը Դ. դարից է, պահպանուած ձեռագրերի թիւը 4000-ից ավելի է. Տէս J. NORMAN, The Finest Surviving Coptic Bookbinding, Exploring the History of Information and Media through Timelines. Տէս <https://www.historyofinformation.com/> կայքում՝ «Translation of the Bible From Greek into Coptic Script Occurs», «The Nag Hammâdi Library: Early Christian Papyrus Codices in Coptic Bindings», «The Earliest-Known Coptic Miniature, and the Earliest Evidence for Tooling on a Leather Bookbinding»: Այլեւ չենք խօսում Պարսից, Հնդկաց եւ Ճենաց աշխարհների մասին:

¹⁰ Երեւան, 2024, 300 էջ, գունաւոր ներդիր՝ 16 էջ:

մաթիւ աղբիւրների համագրմամբ եւ դիտարկմամբ՝ նիւթ քաղելով թէ՛ վիմագիր արձանագրութիւններից, թէ՛ ձեռագիր յիշատակարաններից, թէ՛ մատենագրութիւնից ու աւանդագրոյցներից՝ յատուկ ուշադրութիւն դարձնելով գիտական նորագոյն հրապարակումներին: Դրա շնորհիւ հեղինակի խօսքն արդէն ոչ թէ պատմական յայտնի տուեալների պարզ վերաշարագրութիւն է, այլ խորին հետազօտութիւն, ուր գիտական նորոյթն անհամեմատ աւելին է, քան պահանջուած՝ ձեռագրի, գրչագրողի, գրչութեան վայրի վերաբերեալ տեղեկութիւնների մէկտեղումը: Օրինակ էջ 67-ում հեղինակը ճշգրտում է Գեղամայ ծովակի երբեմնի կղզու եկեղեցիների անունները. «Թէեւ Սեւանայ կղզում արդէն եկեղեցի կար, որտեղ սպասաւորում էր Մաշտոց Եղիվարդեցին, սակայն 864 թուականին, աջակից ունենալով Սիւնեաց իշխանուհի Մարիամ տիկնոջը, կղզում կառուցում է երկու եկեղեցի՝ Սուրբ Առաքելոց եւ Սուրբ Աստուածածին: Սեւանայ կղզում հետագայում եւս կառուցուել են եկեղեցիներ, բայց այժմ կանգուն են միայն երկուսը, որոնց անունների, ինչպէս նաեւ կառուցման հանգամանքների վերաբերեալ տարակարծութիւնները շատ են: Մեր ուսումնասիրութիւնը ցոյց տուեց (ընդգծումը.՝ Գ. Մ.), որ այժմ կանգուն փոքր եկեղեցին Սուրբ Կարապետն է, որն ըստ աւանդութեան, կառուցուել էր Գրիգոր Լուսաւորչի կողմից Սուրբ Յարութեան տաճարի հետ. «մերձ Սուրբ Յարութեան սրբացեալ տաճարին կառույց եւ մատուռ մի, անուանելով Սուրբ Կարապետ, ի պատիւ Ամլորդոյն եւ արքային Տրդատայ»: Գրքի վերաբերեալ լիակատար տպաւորութիւն ստանալու համար կարելի է յիշել օրինակ Սիրափի Տէր-Ներսիսեանի՝ «Հայկական ձեռագրեր Ֆրիրի արուեստի պատկերասրահում»¹¹, աշխատութիւնը, որում հիմնական շեշտը ձեռագրերի նկարագրութեան եւ մանրանկարների ուսումնասիրութեան վրայ է, կամ ռուսերէն «խմբակային մենագրութիւնը» Արեւելեան գրչագրերի մասին, որ նուիրուած է տարբեր ժողովուրդների ձեռագրական մշակոյթի յատկանշական ինչ-ինչ կողմերի նկարագրութեանը¹²: Ի տարբերութիւն նշեալ-

¹¹ Տէս «Armenian Manuscripts in the Freer Gallery of Art», Washington, 1963:

¹² Տէս «Рукописная и ксилографическая книга Востока. Очерки Кодикологии», Սանկտ-Պետերբուրգ, 2015: Մեր պարագային ուշագրաւ է յաջորդող հատուածը: Այն վառ վկայութիւն է առ այն, որ ոչ միայն հայերէնով եւ հայաստանում է մեր ձեռագրական ժառանգութիւնը, այլ նաեւ օտար լեզուներով եւ ի սփիւռս աշխարհի. «Рукописи, появившиеся на стыке культур, иногда имеют кодикологические признаки, относящиеся к разным традициям. Так, например, в РНБ хранится персидский перевод Четвероевангелия конца XVII — начала XVIII в., переписанный армянином по имени Саргис Луч ибн Амир Малик с протографа конца XIV в. (Дорн 248). Основная

ների՝ Ղազարոսեանի աշխատութիւնը միտուած է ընտրուած նիւթն ամբողջովին բացայայտելու խնդրին՝ տեսադաշտից բաց շթողնելով անգամ ամենաչնչին մանրամասնութիւնները. եւ սա առանձնակի բարձրացնում է աշխատութեան գիտական արժէքը: «Նախաբան» ու «Հայ գրչութեան նշանաւոր կենտրոնները եւ դրանց ուսումնասիրման համառօտ պատմութիւնը» խորագրուած խօսքերով ընթերցողին նախապատրաստելով հետագայ ասելիքին՝ հեղինակը գրքի շորս գլուխներում ներկայացնում է Գեղամայ երկրի գրչութեան կենտրոնները, Գեղամայ երկրի առանձին բնակավայրերին նուիրուած ուսումնասիրութիւնները, Գեղամայ երկրի գրչութեան հնագոյն կենտրոնները Ը.—ԺԳ. դարերում, Մաքենեաց ուխտը եւ Սողոմոն Մաքենացին, Սեւանի անապատը եւ Մաշտոց Եղիվարդեցին, Գեղամայ երկրի գրչութեան կենտրոնները ԺԴ.—ԺԹ. դարերում, Խորուագետ գիւղի ձեռագիր մատեանը, Դանիէլ Բաբունապետի «Հայոց Արեւելեան Տան» վարդապետարանը եւ նրա ձեռագրական ժառանգութիւնը, Մաքենիսի գրչութեան կենտրոնը, Կոթագեղի գրչութեան կենտրոնը, Վանեվանի կամ Ներքին Կթանոցի գրչութեան կենտրոնը, Շողագայ վանքի գրչութեան կենտրոնը, Նորատուսի ձեռագիր մատեանը, Փառակունիս գիւղի ձեռագիր մատեանը, Հայրավանքի կամ «Մարդաղանեաց սուրբ նշանի» գրչութեան կենտրոնը, Դէմդէմաշէն գիւղի գրչութեան կենտրոնը, Ղուլալի գիւղի գրչութեան կենտրոնը, Կածիք գիւղի գրչութեան կենտրոնը, Խորոտկավանքի գրչութեան կենտրոնը, Բատակալ եւ Կաղմախի գիւղերի գրչութեան կենտրոնը, Փոքր Կզնուտ գիւղի ձեռագիր մատեանը, Դարանակս գիւղի գրչութեան կենտրոնը, Բարկիս գիւղի ձեռագիր մատեանը, Սեւանի անապատի գրչութեան կենտրոնը ԺԷ.—ԺԹ. դարերում, Սեւանի անապատի գրչութեան կենտրոնի վերածնունդը, Սեւանի անապատի մատենադարանը: Այստեղ պէտք է նկատել, որ մի փոքր շրջանի համար յիշատակուած կենտրոններն այնքան են, որ շատ օտարներ կերագէին

часть книги выполнена в рамках иранских традиций — текст начертан хорошим почерком *наста'лик* на лощеной бумаге верже кремового оттенка, с использованием *мистара* при разлиновке, окружен рамкой — синей и двойной красной линиями. Крышки переплета обтянуты снаружи красной кожей с тиснением — средник *турундж*, медальоны *сартурундж*, угольники *лачаки*, все с растительным орнаментом; внутренняя сторона оклеена бумагой. Европейское влияние, однако, явственно прослеживается в способе шитья тетрадей: листы соединены шестью стежками, а благодаря тому, что переплет поврежден и отходит от блока книги, можно отчетливо наблюдать кожаные бинты, которые рельефно выступают и на коже покрытия корешка. Кроме того, переплет не имеет клапана, но на краях крышек видны следы от крепления застежек, которые характерны для европейских книг, а также рукописей христиан Ближнего Востока, в частности армян», էջ 74—75:

դրանց թէկուզ կէսի գոյութիւնը իրենց ողջ երկրում: Եւ տեղանունների ու անձնանունների այս պարտադրեալ առատութեան պարագային յոյժ կարեւոր է համապատասխան անուանացանկերի առկայութիւնը, որ դիւրացնում է ցանկացած որոնում:

Մենագրութեան կառուցուածքի առումով դիտելի է, որ աշխատութիւնը բաղկացած է 300 էջից եւ ներառում է ինչպէս պատմահնախօսական, այնպէս եւ ձեռագրագիտական մանրակրկիտ վերլուծութիւն: Այն ունի ակնյայտ գիտական նպատակ՝ վեր հանել մի տարածաշրջանի մշակութային ժառանգութիւնը, որը մինչ Ղազարոսեանի անդրադարձը պատշաճ ուշադրութեան չէր արժանացել: Հեղինակը ձեռնամուխ է եղել Սեւանի աւազանի գրչական ժառանգութեան համակարգային ուսումնասիրութեանը՝ օգտագործելով հնարաւոր բոլոր աղբիւրները՝ յիշատակարաններ, ձեռագրացուցակներ, վիմագրական արձանագրութիւններ, մատենագրական վկայութիւններ... եւ յաջողութեամբ կեանքի է կոչել իր նպատակը՝ ի ցոյց է դնելով Սեւանավանքի դերն իբրեւ ուսումնագիտական կարեւոր կենտրոն, որը տարբեր դարաշրջաններում ծառայել է ինչպէս գրիչների կրթութեան, այնպէս եւ ձեռագրական ժառանգութեան պահպանման ու տարածման վայր:

Իբրեւ նորոյթ եւ առանձնակի ներդրում դրուատանքի արժանի են Արփեհիկ Ղազարոսեանի մենագրութեան կարեւորագոյն գիտական ներդրումները՝

Ա) Գեղամայ երկրի գրչութեան կենտրոնների մաքողական քարտէզագրումը (տե՛ս էջ 46)՝ հիմնուած հիշատակարանային վկայութիւնների, այլազան մենագրութիւնների, վիմագրական եւ աղբիւրագիտական տուեալների վրայ¹³,

Բ) Յիշատակարանների հիման վրայ արուած գրչակենտրոնների վերակազմումը՝ ինչպէս ժամանակագրական, այնպէս եւ տարածքների առումով,

Գ) Նախկինում անյայտ եւ չուսումնասիրուած ձեռագրերի ի յայտ բերումը եւ դրանց նկարագրական ու բովանդակային վերլուծութիւնը:

Յատուկ ուշադրութեան է արժանի Ղազարոսեանի կատարած գիտահիմունքային աշխատանքը՝ յիշատակարանային աղբիւրների համադ-

¹³ Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ քարտէզի այդ մէկ էջն ստանալու եւ ճշգրտելու համար հարկաւոր էր ուշադիր «քրքրել» հազարաւոր էջեր:

րութիւնը վիմագրական ու մատենագրական վկայութիւնների հետ: Սա թոյլ է տալիս վերընկալել իւրաքանչիւր առանձին գրչութեան կենտրոնի ամբողջական գործառոյթը՝ սկսած գրի ընտրութիւնից մինչեւ մանրանկարչութեան ոճաբանական առանձնայատկութիւններ:

Արփենիկ Ղազարոսեանի՝ «Գեղամայ երկրի գրչութեան կենտրոնները եւ ձեռագրական ժառանգութիւնը» մենագրութիւնն անգնահատելի ներդրում է հայ միջնադարեան մշակոյթի եւ մասնաւորապէս՝ ձեռագրագիտական ժառանգութիւնն ուսումնասիրելու գործում: Այն ներկայացնում է Գեղամայ երկրամասի գրչութեան պատմութիւնը՝ զուգակցելով տեղագրական, պատմական, գեղարուեստական եւ գրաբարագիտական ուսումնասիրութեան եղանակները: Հեղինակի կատարած դաշտային աշխատանքների, աղբիւրագիտական վերլուծութեան, մատենագրական որոնումների շնորհիւ ստեղծուել է բարձր գիտական արժէք ունեցող մի գործ, որը կարելի է առաջարկել որպէս կաղապարային մօտեցում նաեւ այլ տարածաշրջանների գրչակենտրոնների ուսումնասիրման համար: Աշխատութիւնն ունի նաեւ կիրառական նշանակութիւն. այն կարող է ուսումնական ձեռնարկ ծառայել բուհական համակարգում, ինչպէս նաեւ իբրեւ հիմք՝ Սեւանի տարածաշրջանի պատմամշակութային ժառանգութեան վերարժեւորման ծրագրերի համար:

ԳԵՒՈՐԳ ՀՆԶԱՅԵԱՆ

ԱՐՇԱԼՈՅՍ ԳԱԼՍՏԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Ձեռագիր, գրչագիր, մատենա Սեւանի աւազան, Գեղամայ Երկիր:

РЕЗЮМЕ

Создание и сохранение рукописей в Средние века было важной задачей для большинства цивилизованных и цивилизующихся народов. Эти древние

рукописные памятники сегодня представляют собой неоценимое духовное и культурное наследие, позволяющее судить об отношении народов к науке, образованию и просвещению. На фоне статистических данных о количестве средневековых рукописей, сохранившихся в Европе и Востоке, рукописное наследие Армении — около 30 000 армянских рукописей, дошедших до наших дней — представляется исключительным достижением, особенно с учётом драматической исторической судьбы армянского народа.

В этом контексте монография кандидата исторических наук Арпеник Газаросян «*Писцовые центры страны Гегамы и рукописное наследие*», изданная по решению Научного совета Матенадарана имени Месропа Маштоца, представляет собой уникальное исследование, посвящённое истории рукописной культуры Севанского бассейна (исторической страны Гегамы). Автор изучает 67 сохранившихся рукописей из региона, подробно анализируя как их содержание, так и обстоятельства их создания, включая биографии писцов и историю писцовых центров. Газаросян использует широкий круг источников — от эпиграфики и памятных записей до литературных преданий и новейших научных публикаций, что делает исследование глубоко оригинальным и научно значимым.

Монография состоит из 300 страниц, включает как историко-источниковедческий, так и рукописоведческий анализ, и впервые предлагает систематизированное картографирование рукописных центров страны Гегамы. Исследование охватывает как раннесредневековый, так и позднесредневековый периоды, уделяя особое внимание таким центрам, как Севанский монастырь, Макинцкий обитель, деревни Котагех, Хороваканк, Даранакс и другие. Работа Газаросян может служить моделью для аналогичных исследований в других регионах Армении.

Значение этой монографии заключается не только в научной новизне, но и в её прикладной ценности: книга может использоваться в образовательных целях и как основа для программ по переоценке культурного наследия Севанского региона.

SUMMARY

The creation and preservation of manuscripts was a crucial cultural endeavor for nearly all civilized and civilizing nations during the Middle Ages. Today, this

handwritten legacy is considered an invaluable treasure, both spiritually and intellectually. An overview of manuscript holdings in various European countries—ranging from over 80 000 in the Vatican Library to several hundred in Baltic states—illustrates the historical efforts of each nation in preserving its intellectual heritage. Despite facing severe hardships throughout its history, Armenia has succeeded in preserving approximately 30 000 medieval Armenian manuscripts, a testament to the resilience and cultural devotion of its people.

In this context, the monograph “*The Scriptoria and Manuscript Heritage of the Land of Gegham*” by *Arpenik Ghazarosyan*, candidate of historical sciences and longtime lecturer at the Vazgenian Seminary of Sevan and the Gevorgian Theological Seminary, emerges as a fundamental scholarly work. Published with the approval of the Scientific Council of the Matenadaran (Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts), the study focuses on the history of manuscript production in the Gegham region (present-day Sevan basin), revealing that only 67 manuscripts from this area have survived. With thorough attention to detail and an interdisciplinary methodology, the author not only analyzes the content, script, and provenance of these manuscripts but also reconstructs the historical background of the scriptoria through epigraphic, codicological, and bibliographical sources.

The monograph is structured into four comprehensive chapters and presents detailed case studies on specific scriptoria, including Sevan, Makenis, Noratus, Hayravank, and others. It also offers a complete mapping of Gegham’s scriptoria, identification of previously unknown manuscripts, and reconstruction of scriptorium activities through colophons and historical data. Ghazaryan’s methodological rigor—particularly the integration of manuscript colophons with epigraphic and historiographic evidence—sets a new standard in Armenian manuscript studies. The work not only contributes to medieval Armenian cultural history but also serves as a model for future regional manuscript research and can be utilized in academic curricula and heritage preservation projects.

